«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հովհաննես Թումանյանի հայրենասիրական երգերը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Ս. Մանուկյան
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Տարոնիկի Գ. Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ 6
Եզրակացություն 16
Օգտակործված գրականության ցանկ 17

Ներածություն

Հայ ազգային մեծագույն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը գրականության մեջ մտավ 19-րդ դարի վերջին և ստեղծագործեց մինչև 20-րդ դարի 20-ական թվականների սկիզբը՝ շուրջ չորս տասնամյակ: Սակայն նրա ստեղծագործության գեղարվեստական հասունության, ռեալիզմի և ժողովրդայնության ամենաբարձր աստիճանը համընկավ անցած դարի առաջին երկու տասնամյակների հետ: Այդ տարիներին Թումանյանն ինչպես իր գեղարվեստական երկերով, այնպես էլ գրական- հասարակական բազմակողմանի գործունեությամբ դարձավ հայ գրականության կենտրոնական դեմքը:

Թումանյանի համազգային նշանակությունը վաղուց արդեն դուրս է եկել իր ապրած և ստեղծագործած պատմական ժամանակի սահմաններից, այն չի կարող պարփակվել մեկ առանձին շրջափուլի մեջ: Իր երկերի համազգային և համամարդկային բովանդակությամբ, գեղարվեստական վիթխարի ընդհանրացումներով Թումանյանը նվաճել է հայ ժողովրդի ազգային մեծ գրող «ամենայն հայոց բանաստեղծ» կոչվելու իրավունքը: Նրա ստեղծագործությունը դարձավ հայրենիքի անցյալի և ներկայի, նրա հեգևոր ուժերի և գեղարվեստական ավանդույթների լավագույն ամենախոր մարմնավորումը: Այդ իրողությունը գիտակցվել է դեռևս Թումանյանի կենդանության ժամանակ: 1914թ. Վահան Տերյանը նրան բնութագրել է իբրև «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգևոր իմաստուն ու վսեմ թարգման», իսկ Վալերի Բրյուսովը երկու տարի անց գրել է. «Ամբողջությամբ վերցրած Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և դրոշմված բանաստեղծական տողերում մեծ վարպետի ձեռքով»:

Թումանյանի ստեղծագործության համազգային նշանակությունը ոչ միայն այն է, որ նա հանրագումարի բերեց հայ գրականության նախընթաց ողջ զարգացումը և հզոր ազդակ դարձավ նրա հետագա առաջընթացի համար, այլև այն, որ Թումանյանի երկերն առավել լրիվությամբ, գեղարվեստական չխամրող ուժով մարմնավորեցին հարազատ ժողովրդի ազգային բնավորության լավագույն գծերը, դարձան նրա հոգևոր ուժերի, նրա բարձր ձգտորմների իդեալների խորհրդանիշ:

Հովհաննես Թումանյանը մեր ազգի մեծ բանաստեղծն է:

«Մեր թռիչքը Հովհաննես Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել»-գրել է մեծ քնարերգու Ավետիք Իսահակյանը:

Կա Մեծարենց, կա Տերյան, բազում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

Ե. Չարենց

Հովհ. Թումանյանին մենք հաճախ շրջասաբար անվանում ենք «Մեծ Լոռեցի»: Թումանյանը այն գրողներից է որոնց հայրենի միջավայրը առաջին տպավորությունները մանկությունից ընկալած գեղարվեստական ավանդույթները բնորոշ դեր են խաղում նրանց ամբողջ ստեղծագործական կյանքում: Հենց այդպիսի դեր խաղաց հայրենի Լոռին Թումանյանի գրական ճակատագրի մեջ: 1969թ. փետրվարի 7-ին/19-ին/ Դսեղում ծնված Թումանյանը թեև ընդամենը 10 տարի է ապրել այնտեղ, սակայն երբեք չկտրվեց նրա հոգևոր կապը հայրենի եզերքի հետ, որը եղավ նրա ստեղծագործության հիմնական թեմատիկ աղբյուրը, աշխարհազգացողության ու գեղագիտական իդեալների նախահիմքը: Ավետիք Իսահակյանը շատ ճշգրիտ է բնութագրում. «Դյուցազնական–նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով. նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով , նաև իր պայքարով՝ազատության և երջանկության համար, եղավ Օհաննեսի ներշնչարանը: Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը»:

Հովհ. Թումանյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, նորավեպեր, զրույցներ ու հեքիաթներ, ակնարկներ, քնադատակն և հրապարակախոսական հոդվածներ, բայց ամենից առաջ նա բանաստեղծ է:

Թումանյանը հեղաշրջող դեր է կատարել մեր պոեզիայում: Նա ապրել է մի դարաշրջանում, երբ վճռվում էր ժողովուրդների և մարդկանց բախտը, գալիքի խնդիրը կենտրոնական էր դարձել հասարակական կյանքում և գրականության մեջ: Բանաստեղծը խորությամբ զգացել,ըմբռնել է ազգերի և մարդկանց ողբերգությունը պատկերել է կյանքը՝ խորքով ու լայնքով, բացահայտել մարդու ներքին դրաման և երազները: Արտացոլման մեծ ուժի և ազգային հոգու խոր զգացողության շնորհիվ նա

արտահայտել է նաև հայ մարդու համամարդկային երազները, ազգային երգին տվել նաև համամարդկային թռիչք:

Թումանյանի մեծության, ստեղծագործության խորքի և լայնահունության մասին իմատուն տողեր է գրել Եղիշե Չարենցը.

Նա մեծ էր հողով, արյունով: -Արմատնե՛ր ուներ նա հողում

Իր երգերը – գեղջուկ նաիրցու քրտինքով էր նա ողողում:

Հանճարեղ երգերում նրա- իր երկրի արևն էր շողում: -

Նա մեծ էր հողով, արյունով: -Արմատնե՛ր ուներ նա հողում: -

Նա մեծ էր ավելի, քան եղավ: - Երկնքի նման ընդարձակ,

Օվկիանի նման՝ իր հոգին ընդգրկել էր կյանքը անեզր: -

Եվ ոգու ափերին նստած՝ նա նայում էր հայացքով պայծառ-

Եվ որսում էր երգեր ու խոհեր և տեսնում էր չքնաղ երազներ…

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

1

Թումանյանի քնարերգության բարձրակետը նրա հայրենասիրական բանաստեղծություններն են, որոնց մեջ խտացման ու բյուրեղացման են հասել և հայոց պատմական ճակատագրի ու ներկայի նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, և ապագայի մասին ակնկալիքները; Թումանյանին մշտապես զբաղեցրել են հայոց պատմական ճակատագիրն ուապագայի հարցը; Նա գրել է. «Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, նրա պատմությունը, էն սոսկալի դրաման,որ կոչվում էհայոց պատմություն,ու էնտեղից են բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը»;

Հայրենիքի քաղաքական վիճակի գեղարվեստական արծարծումները կազմում են Թումանյանի քնարերգության հիմնական և կարևորագույն մոտիվներից մեկը:

Այդ թեմայի լավագույն գործերում քնարական միջոցներով կերտված է հայրենիքի հավաքական պատկերը, որն իր էությամբ, էպիկական է, ողբերգական և հերոսական միաժամանակ:

2

20-րդ դարի սկզբին /1902-1903շ/ Թումանյանը գրեց հայրենասիրական բանաստեղծությունների մի ամբողջ շարք՝ «Մեր նախնիներին», «Հայոց լեռներում», «Մեր ուխտը», «Հայոց վիշտը»; Դա նրա ստեղծագործական ուժերի բուռն վերելքի շրջանն էր, որ Թումանյանն ամբողջ խորությամբ գիտակցեց համազգային բանաստեղծի իր կոչումն ու դերը:

Թումանյանը աչք է բացել և տեսել իր սիրելի ժողովրդի անազատ, ծանր աղետներով լի կյանքը: Հովհաննես Թումանյանն այն հանճարներից է, ովքեր դիմագիծ են տալիս իրենց ծնող ժողովրդին: «Ամենայն հայոց բանաստեղծը» իր ստեղծագործություններում անկրկնելի արվեստով արտահայտել է հայ ժողովրդի բնավորությունը, հոգեբանությունը, մտածելակերպը, նվիրական իղձերն ու գեղեցիկի ձգտումը, աշխարհի մասին պատկերացումները: Իր գեղջուկ հերոսների մեջ էլ նա հայտնաբերել է հավերժ մարդկային ու ընդհանրական հատկանիշներ՝ հաստատելով այն

ճշմարտությունը, որ արվեստում ու գրականության մեջ համամարդկայինն ստեղծվում է ազգայինի միջոցով:

Եվ ահա նրա քնարի լարերից հնչում են «դառը հեծության հառաչանքները».

Հայոց վիշտը անհուն մի ծով,

Խավար մի ծով ահագին,

Էն սև ծովում տառապելով,

Լող է տալիս իմ հոգին:

Հայոց վիշտը հայ ժողովրդի, հետևաբար, բանաստեղծի վիշտն է, որը նա համեմատել է «անհուն ծովի» հետ, իսկ իրեն համարել է «Էն սև ծովում տառապող», տվայտվող հոգի:

Այս փոքրիկ բանաստեղծության մեջ արտացոլվել են Թումանյանի բոլոր ուժեղ կողմերը՝ բանաստեղծական մտքի և զգացմունքի զարմանալի խորությունը, խոսքի բացառիկ հակիրճությունը ժողովրդի և բանաստեղծի վշտի և երազանքների նույնությունը: Բանաստեղծության միջով անցնում են երկու հիմնական պատկեր՝ անափ ու խավար, անհատակ ծովի պատկերը, որը հայ ժողովրդի տառապանքների այլաբանական նկարագիրն է և այդ ծովում տառապող, նրա ծանրությունն ու խորությունն իր սրտի զարկերով և իր բոլոր նյարդերով զգացող անհատի կերպարը:

Մերթ զայրացկոտ ծառս է լինում

Մինչև երկինք կապուտակ,

Ու մերթ հոգնած սուզվում, իջնում

Դեպի խորքերն անհատակ:

Ոչ հատակն է գտնում անվերջ

Ու ոչ հասնում երկնքին,

Հայոց վշտիմեծ ծովի մեջ

Տառապում է իմ հոգին:

«Մեր նախորդներին» բանաստեղծությունում արտացոլում է մի ամբողջ սերնդի հոգեկան բարդ ապրումները: Այդ սերնդին վիճակվեց ականատես լինելու ազգային ազատագրական շատ ծրագրերի փլուզման, հայ ժողովրդի գլխին իջած ոճիրներին: Հովհաննես Թումանյանը երանի էր տալիս Ռ. Պատկանյանի և Րաֆֆու ժամանակաշրջանի սերնդի երգիչներին, որոնք ասպարեզ իջան հայ ժողովրդի համար բավականին բարդ ժամանակաշրջանում և երգեցին հայրենիքի մոտալուտ փրկության հավատով և «ոսկի երազանքներով»: Այդ երազանքները ցրեց դառն իրականությունը՝ չքացան «միրաժի նման» «հոշոտվեց» սիրելի հայրենիքի փայփայած պատկերը և նրա հետ՝ նոր երգիչների «զգայուն սրտերը»:

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև,

Եվ մեր զգայուն պատերն իրեն հետ,

Ոսկի երազներ՝ միրաժի նման,

Մեր անապատում չքացան անհետ:

Պարզ, բայց հանճարեղ այս տողերում, բացահայտվում է քաղաքական իրականության հետ բանաստեղծությունների բախումը, անապատ է հիշեցնում երկիրը: Ահա, թե ինչու 1902թ.-ին գրված այս հրաշալի բանաստեղծության հավատը մեզ ռեքվիեմ է հիշեցնում, մահերգ՝ ուղղված ինքն իրեն:

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեգից
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սըրտից և՛ երգ, և՛ Աստված:

4

Թումանյանը քնարական պոեզիայի միջոցով իմաստավորել է հայ ժողովրդի անցած բազմադարյան ուղին, բացահայտել նրա պատմության դասերն ու փիլիսոփայությունը, սպասումներն ու հավատը: Այդ ամենի լավագույն

մարմնավորումը «Հայոց լեռներում» բանաստեղծությունն է, որը հայ ժողովրդի բանաստեղծական կենսագրությունն է:

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
ՈՒ մենք անհատնում
Էն անլույս մըթնում
Երկար դարերով գնում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Հակառակ ժողովրդի տառապանքների ծանրությանը՝ հույսը, պայծառ ապագայի հավատը երբեք չի լքել բանաստեղծին. նրա գործերում ամենաթանձր թախիծը միշտ էլ ուղեկցվել է լավատեսությամբ՝ իր ժողովրդի պայքարի հաղթանակի նկատմամբ: Թումանյանը ընդհանրացման բացառիկ ուժով տվել է հայոց դարերի բանաստեղծական խտացված պատկերները իր «Հայոց լեռներում» ստեղծագործության մեջ:

Խավար գիշեր է եղել մեր ժողովրդի ճամփան, և նա երկար դարերով, դժվարին վերելքով առաջ է գնացել «Հայոց դժվար լեռներում»: Աղետներով լի է այդ ճանապարհը, քանի որ «շեկ անապատի օրդուները» հանգիտ չեն տալիս նրան, և ճողովուրդը կոտորվում է, դառնում «հատված-հատված», սակայն իրեն չի կորցնում, շարունակում է վերելքի ուղին:

ՈՒ մեր քարվանը շըփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
ՈՒ հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում

Թումանյանն ընդգծում է ժողովրդի անընկճելի ոգին: Նա դժվարին երթի ընթացքում անգին գանձեր է ստեղծում, խոցվում է, ողջակիզվում, բայց այդ գանձերը տանում է իր հետ որպես մեծագույն սրբություն:

Սակայն ի՞նչ է լինելու այդ դժվարին վերելքի վախճանը:

Եվ ստեղծագործության վրա իր կենսատու լույսն է սփռում հեղինակի անխախտ հավատը ժողովրդի պայծառ գալիքի նկատմամբ, և խոր թախիծով ստեղծված ստեղծագործությունն ավարտվում է լավատեսությամբ:

Երկնքի ծերին հայացքը հառած բանաստեղծը հավատով հարց է տալիս, թե երբ կբացվի պայծառ առավոտ.

ՈՒ մեր աչքերը նայում են կարոտ՝

Հեռու աստղերին, երկընքի ծերին,

Թե երբ կըբացվի պայծառ առավոտ՝

Հայոց լեռներում,

Կանաչ լեռներում:

5

Թումանյանը հայ ժողովրդի պատմության իմաստը չէր տեսնում միայն ինքնապահպանման համար մղած պայքարի մեջ: Կա մի ուրիշ կողմ ևս, որը շատ բարձր էր գնահատում բանաստեղծը՝ ժողովրդի լավագույն զավակների մշտական ձգտումը՝ ընթանալու «միշտ դեպի լույս» «միշտ դեպի վեր»՝ չնայած բախտի բոլոր հարվածներին:

Բայց գնում ենք մենք անվեհեր

Զարկերի տակ չար բախտի,

Մեր աչքերը միշտ դեպի վեր՝

Դեպի լույսը մեր ուխտի:

Դեպի վեր…Այս խոսքերը խորհրդանշում են ժողովրդի պատմության ընթացքը դեպի մարդկային բարձր իդեալների իրագործում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին /1914-1916/ Հովհ. Թումանյանը գրեց նոր բանաստեղծություններ՝ նվիրված հայրենիքի ճակատագրին, որոնք պսակում են նրա հայրենասիրական պոեզիայի երեսունամյա ուղին: 1916 թվականին

«Հայրենիքիս հետ» խորագրով լույս է տեսնում նոր ժողովածուն՝ նախորդ տարների գրած ստեղծագործությունների հետ:

Այս շրջանի Թումանյանի հարենասիրական մտորումների ամենաբնորոշ տրամադրություններն են ողբերգությունն ու լավատեսությունը, որոնք սերտորեն զուգակցված, հաճախ միահյուսված են միևնույն բանաստեղծության, միևնույն պատկերի մեջ: Հայ գրողներից ոչ ոք այնպիսի ցնցող ուժով չզգաց և չպատկերեց հայ ժողովրդի ողբերգության խորությունը, բայց և ոչ ոք այնպիսի մեծ հավատով չերգեց նրա մոտալուտ վերածնությունը, թեև երկու տրամադրություններն էլ հատուկ էին այդ շրջանի մեր լավագույն բանաստեղծներին,բավական էիշել Վահան Տերյանի «Երկիր Նաիրին», Ավետիք Իսահակյանի «Մեր նախահայրերը», Եղիշե Չարենցի «Կապուտաչյա հայրենիքն» ու «Դանթեական առասպելը»:

Այդ տրամադրությունների միասնության առումով իրենց գեղարվեստական խորությաբ բացառիկ ուժի գործեր են «Բարձրից», «Հոգեհանգիստ» և «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունները:

6

«Բարձրից» բանաստեղծության մեջ Թումանյանը բարձրից է նայում Աստծու աշխարհքին՝ իր բարի, շռայլ սրտի մեծ խորքերից: Եվ վերջնակետն իր ժողովրդի չկա ու չի կարող լինել: Այստեղ կա այդ բարձրության բնութագիրը՝ եղերական օրերին նա զգում է, որ իր մեծ սիրտը աշխարհքից էլ մեծ է, և իր սիրտը իդեալների աշխարհն է՝ թեև ինքը իրապաշտ է:

Իմ բարի սրտի մեծ խոհերից,

Էն մեծ խոհերի անհուն խորերից՝

Կամեցավ՝ ելավ իմ հըզոր հոգին,

Որ բարձրից նայի Աստծու աշխարհքին…

Նա տեսնում է Աստծու աշխարհը… բնական գեղեցկությունը, այսինքն՝ ինքը՝ բնությունը՝ իր անաղարտ ձևերի մեջ: Այստեղից սկիզբ է առնում հոգեկան դրաման՝

որպես հետևանք մարդկային կյանքի անններդաշնակության, գեղեցիկ աշխարհին հակադիր մռայլ պատկերներով.

Տեսավ ՝ ուտում են ամենքն ամենքին.

Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,

Եվ իր պաշտողին ՝ ամեն մի աստված.

Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած:

Այս ընդհանրացմանը հետևում են ուրիշ տողեր, ավելի ճիշտ՝ խտացումներ, թանձրացումներ կյանքի, մարդու, ազգերի, բախտի, խավարի և նրա զոհերի մասին: Բանաստեղծությունը զուտ հայրենական տառապանքների պատկեր լինելուց վերաճում է համամարդկային տառապանքների ընդհանրացման: Տիեզերական ներդաշնակության դեմ են ելնում խաթարված կյանքի պատկերները, ամենքը լափում են ամենքին, չկա բարոյակն վսեմ սկզբունքը, կործանվում են ազնիվ հոգիները, հայրենիքն ուտում է իր զավակին:

7

Հայոց մեծ բանաստեղծն ապրում է իր ժողովրդին վիճակված մեծագույն աղետը՝ 1915թ. Մեծ Եղեռնը: Բանաստեղծը լինում է Արևմտյան Հայաստանի աղետի վայրերում և անմար կսկիծով պատկերում հայրենիքի ավերվածությունն ու կոտորածը: Թումանյանն իր «Հոգեհանգիստ» բանաստեղծությամբ հայրենիքի օրենքով «վերջին հանգիստն է կարդում» ազգի դժբախտ զոհերին: «Հոգեհանգիստը» մի վսեմ ռեքվիեմ է, տառապալից սրտի խորքից ծնված սաղմոսաերգ, որը գնալով ահագնանում է, ծավալվում ահեղ և ողբերգական ղողանջներով, որպես կերոններ վառելով մեր աշխարհի բարձրագահ լեռներն, ու համազգային վշտին ողբերգակից դարձնում հայրենիքի գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը.

Աջիցս Եփրատ, ձախիցս Տիգրիս ահեղ ձեներով:

Սաղմոս կարդալով՝ անցան գնացին խոր-խոր ձորերով…

Բանաստեղծը իր մեջ ուժ գտնելով՝ կարողանում է պահպանել հոգու արիությունը և նզովքի խոսք ասել անարդար աշխարհի տերերի հասցեին, որոնք օրհասական վիճակի հասցրին իր ժողովրդին:

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան

Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան,

Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,

ՈՒ հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

«Մարդակեր գազան մարդը» արտահայտության մեջ խտացված է արդարության ջատագով բանաստեղծի անողոք դատավճիռը արյունոտ աշխարհի նկատմամբ…

«Խոժոռ, մենակ ու հաստատ Մասիսի նման…» կանգնել է բանաստեղծը ու դիտում է հայկական լեռնաշխարհը ծայրից ծայր, ուր «շեն ու քաղաք, ծովից մինչև ծով մարած են, մեռած, փռված ու ցրված հազար- հազարով»: Եվ ահա մի ցնցող պատկեր. Հայոց ողջ աշխարհը բանաստեղծի հետ միասին հոգեհանգիստ է կարդում իր անհամար անբախտ զոհերին:

Հանգե՛ք, իմ որբեր…Իզու՛ր են հուզմունք, իզու՛ր և անշահ…

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկա՛ր էսպես կըմնա…

8

Թումանյանը մեկընդմիշտ չի մնում այս տրամադրությունների ոլորտում: Նրա մոտ միշտ ի վերջո գերակշռում է լուսավոր հավատը մարդկային հաղթանակի, ժողովրդի փրկության և վերածնության նկատմամբ: «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը դրա լավագույն ապացույցն է: Կա անմար կսկիծ այս բանաստեղծության մեջ՝ ավերված, <<զարկված ու զրկված>>, <<ողբի ու որբի>> հայրենիքի նկատմամբ: Սակայն կա նաև խորունկ խորհրդածություն հայ ժողովրդի ապագայի մասին:

Բանաստեղծությունը բաղկացած է չորս վեցտողանի տներից,որոնք ավարտվուն են հայրենիքին ուղղված տողերով: Դրանց մեջ մեկ- երկու իրար հետ ներքին հանգ կազմող բառով խտացվում է տվյալ տան ամբողջ բովանդակությունը:Միասին վերցրած նրանք արտացոլում են հայրենիքի թումանյանական պատկերը,

հայրենասիրական մտորումների ընթացքը: Առաջին երկու տներում ողբերգական տրամադրությամբ և պատկերներով համընկնում է «Հոգեհանգիստի» հետ., գաղթականների անվերջ շարքեր, «տխուր, դատարկ ու խավար» գյուղեր ու շեներ, հայրենիքի «ծաղկավառ դաշտերը» տրորող «ջարդարար ռոմակները» իրենց «ավարներով, ավերներով, խնջույքներով արյունի»… Այդ տներն ավարտվում են «Զարկվա՛ծ հայրենիք, Զրկվա՛ծ հայրենիք», «Ողբի՛ հայրենիք, Որբի՛ հայրենիք» տողերով:

Արդեն երրորդ տնից բանաստեղծության մեջ ծագում է հույսի այն ճառագայթը, որը հետո պիտի ողողի բանաստեղծի գծագրած հայրենիքի ապագայի պատկերը առողջ,առնական լավատեսության շռայլ գույներով : «Հին ու նոր վեռքերով» պատած հայրենիքը ոչ միայն կենդանի է, այլև կանգնած է հնի ու նորի ճամփամիջին՝ լցված վերածնության մեծ երազանքով:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կեհդանի,
Կանգնած խոհու՛ն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին-
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Թումանյանը հավատում է, որ իր հայրենիքը դեռ աշխարհին ասելու է «էն մեծ խոսքը» որի համար կոչված է նա, այսինքն՝ իր նոր ավանդն է բերելու համամարդկային մշակույթի և առաջադիմության մեծ գործին: Այդ տրամադրությունը աճում և խորանում է վերջին տան մեջ.

ՈՒ պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազա՛ր լուսապայծառ հոգիներով ճառագած,
ՈՒ երկնահաս քո բարձունքին Արարատի սուրբ լանջին,

Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,

ՈՒ պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեցքով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,

Իմ նո՛ր հայրենիք,

Հզո՛ր հայրենիք…

Այս տողերը ոչ միայն տվյալ բանաստեղծության, այլև Թումանյանի հայրենասիրական քնարերգության յուրօրինակ հանրագումար են: Այս տողերը դարձան հայ ազգային մեծ բանաստեղծի ազնիվ ու պայծառ պատգամը, որը հայրական իմաստությամբ և գորովանքով ուղեկցում է հայ գրողների նորանոր սերունդներին:

Թումանյանը «հայկական հարցը» երբեք չի դիտել որպես նեղ ազգային խնդիր, այլ միշտ կապել է համամարդկային հարցերի լուծման հետ: Նրա ստեղծագործություններում հայրենասիրությունը ազգային շրջանակներում չի պարփակվել: Այդ գաղափարը նրա պոեզիայում սերտորեն առնչվել է ժողովուրդների բարեկամության, հումանիզմի վեհ գաղափարների հետ: Այդ է պատճառը, որ իր մի շարք ստեղծագործություններում հաշտության, ժողովրդի համերաշխության կոչ է անում:

Եզրակացություն

Հովհ. Թումանյանը իր ժողովրդի հետ է միշտ և ամենուրեք: Այդ իսկ պատճառով նրա հայրենասիրական երգերը կազմում են 20-րդ դարի սկզբի հայ ազգային կյանքի նշանաձողերը: Բանաստեղծը իր ստեղծագործություններով նոր հունի մեջ դրեց հայ գրականության միտքը և մշակույթը՝ տալով կենդանի գույներ և հարուստ բովանդակություն: Նա ստեղծել է մեր հայրենիքի գեղարվեստական պատմությունը՝ նյութ քաղելով հազարամյա հոգևոր գանձերից, ժողովրդական կյանքից, հարատև մաքառումներից ու կենսափիլիսոփայությունից և դարերի ճամփան բռնած հայ մարդու երազանքներից:

Հովհ. Թումանյանի ստեղծագործական մտքի թռիչքի արգասիքները դեռ կսավառնեն սերնդեսերունդ, դարեդար, քանի որ այն համամարդկային արժեքներով և աստվածային մենաշնորհով շաղախված խոհափիլիսոփայական գաղտնիքներ է պարունակում, որոնք դեռ շատ սերունդներ կդաստիարակեն և կկրթեն. դարերի ընթացքում կփորձեն բացահայտել և գնահատել Թումանյանին այնպես, ինչպես Գրիգոր Նարեկացուն գնահատեցին դարեր հետո:

Հովհաննես Թումանյանը համաշխարհային ստեղծագործող է, տիեզերական մեծություն:

Օգտակործված գրականության ցանկ

1. Հայ նոր գրականության պատմություն/Երևան 1979/
   Հեղինակ Էդվարդ Զրբաշյան /հատոր 5/ էջ 246- 340
2. Հայ գրականություն 9-րդ դասարան / Երևան 2000/
   Հրանտ Թամրազյան, Հենրիկ Բախչինյան, Սերգեյ Սարինյան
3. Հովհաննես Թումանյան /Երևան1969/
   Հեղինակ Էդվարդ Զրբաշյան /հատոր 1/
4. https://hy.wikisource.org/wiki